## Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՓԱԼՅԱՆ



Ծնվել է 1941 թ. Բեյրութում:

Նախնական կրթությունն ստացել է տեղի Ազգային Լուսինյան վարժարանում:

1953 թ., ավարտելով վարժարանի վեցամյա դասընթացը, ընդունվել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարան:

1963 թ. հուլիսի 14-ին, ձեռամբ Տ. Եղիշե Պատրիարքի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1963—66 թթ. դասավանդել է ժառանգավորաց վարժարանում:

1966—73 թթ. ուղարկվել է Լիոն, որպես օգնական գերաշնորհ Տ. Դավիթ եպս. Սահակյանի:

1973—78 թթ. Երուսաղեմի ժառանգավորաց և Ս. Թարգմանչաց վարժարաններում նորից անցել է ուսուցչության:

1978 թ. հուլիսի 8-ից Տնօրեն ժողովի կողմից նշանակվել է տեսուչ Ամմանի (Հորդանան) ազգային Յուզբաշյան վարժարանի, ինչպես նաև պատրիարքարանի ներկայացուցիչ: